

Հ Ա Յ Ա Ս Ա

«Հայասա» Հայ Ուսանողական Միություն

Բելգիայի «Հայասա» հայ ուսանողական միության նպատակներն են՝

1. Համախմբել և աջակցել հայ ուսանողությանը և երիտասարդությանը
2. Պահպանել և տարածել հայկական պատմա-մշակութային արժեքները
3. Խրախուսել սովորել հայոց լեզու և պատմություն
4. Ամրապնդել կապը հայրենիքի հետ
5. Համագործակցել հայրենիքի և սփյուռքի համանման կառույցների հետ

Կանոնակարգ

1. Միությունը կազմված է՝

- միության անդամներից
- ուսանողական խորհրդից
- կառավարող մարմնից

2. Ուսանողական խորհուրդ՝

2.1 Ուսանողական խորհուրդը կրում է միության նպատակների պատշաճ կատարման պատասխանատվությունը:

2.2 Միության գործունեությունը հիմնվում է միայն ուսանողական խորհրդի որոշումների վրա:

2.3 Ուսանողական խորհրդի որոշումները ընդունվում են քվեարկության արդյունքում՝ ձայների մեծամասնությամբ:

2.4 Ուսանողական խորհրդի անդամների առավելագույն քանակն է 15-ը:

2.5 Ուսանողական խորհրդի կազմը վերանայվում է տարին մեկ անգամ և ենթակա է փոփոխման:

3. Կառավարող մարմին՝

3.1 Կառավարող մարմինը կրում է միության բնականոն և արդյունավետ գործունեության պատասխանատվությունը:

3.2 Կառավարող մարմինը կազմված է՝

- միության նախագահ – հանդիսանում է միության գործունեության հիմնական պատասխանատուն և գործում է երիտասարդական ժողովի որոշումների հիման վրա: Համակարգում է աշխատանքային խմբերի գործունեությունը: Կազմակերպում և վարում է երիտասարդական ժողովի հանդիպումները:
- քարտուղար – ապահովում է տեղեկատվությունը և կատարում է ուսանողական խորհրդի հանդիպումների ամփոփում:
- գանձապահ – վերահսկում է ֆինանսական գործունեությունը և ներկայացնում է հաշվետվություն:

Հ Ա Յ Ա Ս Ա

- աշխատանքային խմբեր – գործունեություն են ծավալում ուսանողական խորհրդի կողմից նախանշված որոշակի ուղղությամբ: Յուրաքանչյուր աշխատանքային խումբ ունի մեկ պատասխանատու անձ:

3.3 Կառավարող մարմնի անդամներից միության նախագահը, քարտուղարը և գանձապահը ընտրվում են ուսանողական խորհրդի կողմից և ուսանողական խորհրդի անդամների կազմից՝ 1 տարի ժամկետով:

3.4 Միության նախագահը ուսանողական խորհրդի անդամ է առանց ձայնի իրավունքի:

3.5 Կառավարող մարմնի անդամների առաջադրված թեկնածուները ընտրվում են փակ քվեարկությամբ:

3.6 Նախագահի ընտրությունը ուղեկցվում է միության գործունեության ծրագրի քննարկմամբ և հաստատմամբ:

4. Յուրաքանչյուր ուսանող և երիտասարդ, ով կողմնակից է միության նպատակներին և ընդունում է միության կանոնակարգը կարող է դառնալ միության անդամ՝ ուսանողական միության համաձայնությամբ:

5. Միության յուրաքանչյուր անդամ կարող է ընտրել իր անդամակցության տեսակը՝ ակտիվ կամ սովորական: Միության ակտիվ ամդամները, ի տարբերություն սովորական անդամների, մասնակցում են կազմակերպչական աշխատանքներին:

6. Յուրաքանչյուր անդամ պարտավոր է հարգել միության բոլոր անդամներին:

7. Միության յուրաքանչյուր ակտիվ անդամ կարող է ընդգրկվել աշխատանքային խմբերից մեկի մեջ:

8. Միության անդամավճարը կազմում է՝ տարին 12€

9. Միության կանոնակարգը ենթակա է փոփոխման ուսանողական խորհրդի առաջարկով:

Ուսանողական խորհրդի անդամներ՝

Ադասարյան Մարիամ
Բաղդասարյան Տիգրան
Գալստյան Տաթևիկ
Թամիրյան Անի
Թամիրյան Աննա
Մարտիրոսյան Ռուբեն
Ներսիսյան Մարիամ
Ոսկանյան Արթուր
Ոսկանյան Գևորգ
Պետրոսյան Գևորգ